

ԽԱՐՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ
УЧЕНЫЕ ЗАПИСКИ АРМЯНСКОГО ГОСУДАРСТВЕННОГО
ПЕДАГОГИЧЕСКОГО УНИВЕРСИТЕТА ИМ. Х. АБОВЯНА

Հումանիտար գիտություններ №-1-2 (37-38) 2020 Гуманитарные науки

ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

ԿՐՏՄԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ-ՈՐՈՆՈՂԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԽՄԲԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԻՋՈՑՈՎ

ԳՅՈՒԼԱՄԻՐՅԱՆ Զ. Հ.

Խ.Արուսյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան

0010. Երևան, Տիգրան Մեծի 17

e-mail: nellikar2111@mail.ru

«Հետազոտողի առաջ չի՝ կարելի հարցերը քննված և վերջնական ձևակերպմամբ դնել, այլ քննելիք խնդիրը պետք է վստահել հետազոտողի անձնական աշխատանքին»:
Գ. Էդիլյան

Հոդվածում քննարկվում են տարրական դասարաններում իրականացվող ուսումնական գործունեության կազմակերպմանը միտված այն աշխատանքների ձևերը, որոնց համար հիմք են ծառայել խմբային ուսուցման կազմակերպման սկզբունքները: Հոդվածում բացահայտվում է խմբային աշխատանքի կազմակերպման առավելությունները, ուժեղ և թույլ կողմերը, հիմնավորելով գործընթացի արդյունավետությունը:

Հեղինակը ներկայացնում է խմբային աշխատանքի կազմակերպման մեթոդական շղթան և դրա իրականացման մեթոդական հնարքները տարրական դպրոցում:

Հիմնաբառեր. համագործակցություն, փոխըմբռնում, ստեղծագործական-որոնողական գործունեություն, մասնակից-ուղղորդող, վերահսկող-գնահատող գործառույթ:

Ներկայացված է խմբագրություն 05.05.2020թ.

ՀՀ կրթական չափորոշիչներում և տարրական դպրոցի առարկայական ծրագրերում շեշտվում է արդի կրթության ստեղծագործական-հետազոտական բաղադրիչը, որի շնորհիվ կորոնեն և կհայտնաբերեն ճանաչողության գործընթացում ծագող խնդիրները լուծելու եղանակները: Այս խնդրի լուծման բանալին ընկած է այն մեթոդների և

միջոցների հիմքում, որոնց կիրառմամբ իրականացվում են ուսումնական գործընթացի բոլոր գործառնությունները՝ աշակերտներին ընձեռելով լուծում պահանջող հարցեր ու խնդիրներ առաջադրելու, հնարավոր լուծումների տարբերակներ առանձնացնելու, ստուգելու և ստացված տվյալների հիման վրա համապատասխան եզրահանգումներ և ընդհանրացումներ կատարելու հնարավորություն: Ուսուցման այսպիսի ստեղծագործական-հետազոտական կողմնորոշման դեպքում ուսուցիչն «ավելի շատ պետք է լսի, քան խոսի, ավելի շատ դիտի, քան ցույց տա, աշխատանքի ժամանակ աջակցի աշակերտներին՝ խուսափելով որոշակի ուղղություն տալուց» [4,177]:

Այսպիսով, հետազոտական-որոնողական ուսումնական գործունեության շնորհիվ սովորողները գիտելիքներ և կարողություններ են ձեռք բերում ոչ թե ուսուցչի «մատուցմամբ», այլ ինքնուրույնաբար: Դեռևս տարրական դպրոցում պարզ հետազոտումներ կատարելիս կրտսեր դպրոցականներն ավելի վաղ են հաղորդակցվում նոր երևույթների ու գաղափարների, քան երբ դրանք ներկայացնում է ուսուցիչը: Ինքնուրույն որոնողական գործընթացում յուրաքանչյուր սովորող ուսումնասիրում է, նկարագրում և մեկնաբանում այն տեղեկություններն ու դիտումների արդյունքները, որոնք նա ձեռք է բերում ուսումնահետազոտական աշխատանքի ընթացքում՝ բոլորի հետ համահավասար: Այսպես, լեզվական որևէ երևույթի սահմանում ձևակերպելու համար կրտսեր դպրոցականները պետք է կատարեն բազմաթիվ և բազմաբնույթ այնպիսի վարժություններ (վարժությունների համակարգ), որոնցից հնարավոր է բխեցնել այդ կանոնը:

Չարկ ենք համարում նշել, որ փոխներգործուն մեթոդները սերտորեն խառնվում են ուսուցման և դաստիարակության ավանդական մեթոդներին և դրանք դարձնում ավելի ճկուն, ապահովում ուսուցման համագործակցության սկզբունքի արդյունավետությունը: Վերջինիս պահպանման անհրաժեշտությունը մասնավորապես ակնառու է խմբային աշխատանքի ժամանակ: Այն այսօր աշակերտակենտրոն սկզբունքով աշխատող ուսուցիչների հիմնական գործելակերպի էությունն է, որը ուսուցման գործընթացը դարձնում է բացահայտումների գործընթաց. սովորողները հայտնաբերում են շրջակա աշխարհի կապերն ու օրինաչափությունները, յուրացնում մակաձական (ինդուկտիվ) և արտաձական (դեդուկտիվ) եղանակներով դատողությունների հանգելու մեխանիզմները: Փոքր խմբերով աշխատանքը նպաստում է տարբեր աղբյուրներից տեղեկույթ որոնելու, գտնելու, այն վերլուծելու, ինչպես նաև ստացված արդյունքները կապակցված խոսքով ներկայացնելու կարողության ձևավորմանը:

Անառարկելի է, որ խմբային աշխատանքի ամենագնահատելի բնութագրիչը խմբի անդամների միջև **համագործակցությունն է**: Սակայն խմբային աշխատանքը դեռևս համագործակցությունն ապահովելու երաշխիք չէ. աշակերտների համագործակցումը գործունեության ձև է, որը չի սահմանափակվում մի քանի աշակերտից կազմված խմբին, որևէ խնդրի առաջադրմամբ և այն ուսուցչի հրահանգի համաձայն փոխօգնությամբ լուծելու իրողությամբ:

Տարրական դասարաններում մեր դասալսումների ժամանակ ականատես ենք եղել խմբային աշխատանքի բազմաթիվ փորձերի, որոնց ժամանակ նկատելի էին

աշակերտների աշխատանքի արդյունավետությունն ու դրանց օգտագործման և տարածման ուղղությամբ ուսուցիչների և պրակտիկանտ ուսանողների ձգտումը: Սակայն այս գործընթացի հիմնական թերությունն այն է, որ խմբային աշխատանքի ժամանակ ողջ ծանրությունն ընկնում էր առավել ակտիվ և ընդունակ աշակերտների վրա (կամ ուսուցիչն ինքն էր ստանձնում այդ դերը): Նրանք դառնում էին լիդերներ և խմբի աշխատանքը նպատակաուղղում իրենց որոշած ուղիով: Այս դեպքում բարձր առաջադիմություն, ակտիվ խառնվածք և հեղինակություն ունեցող աշակերտներն է՛լ ավելի են ակտիվանում, ընդլայնում և խորացնում իրենց գիտելիքները, իսկ գիտելիքների ցածր մակարդակ ունեցող, պասիվ, ոչ համարձակ երեխաներն այդ պայմաններում դարձյալ մնում են ստվերում: Այնինչ՝ խմբային աշխատանքի գերխնդիրն է՝ **աշակերտների համար իրենց իսկ հնարավորությունների դրսևորման բարենպաստ պայմանների ստեղծումը:** Ուրեմն, հարկավոր է գործել այնպես, որ ակտիվների հետ աշխատելիս անգամ պասիվներն ակտիվանան և աստիճանաբար դառնան առաջատարներ: Հակառակ դեպքում՝ մեթոդը ոչ միայն օգուտ չի տա, այլև կհանգեցնի ոչ ցանկալի արդյունքների. երեխաներն իրենց կզգան անպաշտպան, ճնշված, կխուսափեն պատասխանատվությունից, կկորցնեն ուսման նկատմամբ հետաքրքրությունը: Մեր դասալսումների ընթացքում նկատել ենք, որ խմբային աշխատանքի ժամանակ պարտականությունների անհավասար բաժանումն ու կատարումը խմբում ստեղծում է գերակայության մթնոլորտ: Ձևավորվում են «անառարկելի հեղինակություններ», որոնց ներկայությունը դասարանում մշտապես դառնում է կոնֆլիկտածին, իսկ մրցակցությունը՝ անառողջ: Ուսումնասիրությունները և ուսուցիչների հետ զրույցները մեզ բերել են այն համոզման, որ ակտիվ, գիտելիքներով հարուստ, ընդունակություններով օժտված երեխաները խմբային աշխատանքի ժամանակ՝ անձնային հարաբերությունների կարգավորման ոլորտում բավականին դժվարություններ են կրում: Դա մասնավորապես դրսևորվում է համադասարանցիների հետ հաղորդակցման ոլորտում (կամ անհաշտ են, կամ՝ իշխող): Նմանատիպ երևույթները կանխելու նպատակով անհրաժեշտ է.

- խմբում ստեղծել ստեղծագործական -փոխհամագործակցության մթնոլորտ,
- խմբի բոլոր անդամների միջև ապահովել հանդուրժողական հաղորդակցություն և փոխօգնություն,
- յուրաքանչյուրի մեջ սերմանել համատեղ աշխատանքի արդյունավետության
- ձևավորել խմբի առջև դրված խնդիրները միասնաբար լուծելու անհրաժեշտության և հաճույքի գիտակցում, այդ ուղղությամբ ապահովել բարեվարքության պահպանում:

Խմբային աշխատանքի ընթացքում կարևոր է դիտարկել ուսուցչի մի քանի հիմնական դերեր՝ որպես ղեկավար, մասնակից, խորհրդատու-ուղղորդող և դիտող :

Ուսուցչի կարգախոսը՝ «Պետք չէ պատրաստի գիտելիքներ հաղորդել, անհրաժեշտ է աշակերտների հետ դրանք հայտնագործել»:

Ներկայացնենք մեթոդական - կազմակերպչական այն քայլաշարը, համաձայն որի ուսուցիչը պիտի իրականացնի իր աշխատանքը.

- ✓ ձևավորել աշխատանքային խմբեր, հաստատել կանոնակարգը,
- ✓ քննարկման դնել նախապես մշակված աշխատանքի արդյունքները գնահատելու չափանիշները, դրանք լրամշակել աշակերտների օգնությամբ,
- ✓ հրահանգավորել աշխատանքը, որոշել կատարման ժամանակը,
- ✓ ներկայացնել այն խնդիրները, որոնք պիտի լուծեն խմբերը,
- ✓ աշակերտների միջոցով կրկնել այն հիմնական նյութը, հասկացությունները, որոնք վերաբերում են հետազոտվող խնդրին,
- ✓ վերահսկել աշխատանքի ընթացքը խմբերում և անհրաժեշտության դեպքում՝ ուղղորդել,
- ✓ աջակցել՝ ձեռք բերելու համատեղ աշխատանքի հմտություններ, ձևավորել աշխատանքային բարեկիրթ հաղորդակցության մշակույթ,
- ✓ օգնել աշակերտներին՝ որոնելու ծագած դժվարությունները հաղթահարելու ելքեր,
- ✓ մասնակցի կամ խորհրդատուի կարգավիճակով ապահովել խմբային աշխատանքի արդյունավետությունը,
- ✓ օժանդակել, որ աշակերտները խմբի ներսում փորձեն առանց ուսուցչի օգնության քննարկել առաջադրված կամ ծագած խնդիրը, միմյանց հաղորդել քննարկվող թեմայի վերաբերյալ իրենց ունեցած տեղեկույթը, հանգեն ընդհանուր եզրակացության և որոշեն, թե ո՞վ պիտի ներկայացնի խմբի կողմից ձևակերպած պատասխանը:

Ուսուցիչների հավաստմամբ՝ փոքր խմբերով աշխատանքի կազմակերպումը ժամանակ է խլում դասից, և ընկնում է դասարանի կարգապահությունը: Ինչ խոսք, եթե դասարանի համար սա աշխատանքի նոր ձև է, ապա աշակերտները հմտացած չեն լինում խմբերի բաժանվելու մեխանիզմին: Ինչ վերաբերում է կարգապահությանը, ապա հայտնի է, որ «կարգապահություն՝ կարգապահության համար» մոտեցումն ընդունելի չէ: Դասարանը կարող է լինել ակտիվ, շարժուն, բայց՝ կարգապահ: Բոլոր դեպքերում այդ խնդիրները կանխելու համար սովորաբար իրականացվում են մի շարք քայլեր.

1. Ստեղծել «Խմբի կանոններ»:

Խմբի կանոններն ուսուցչի մասնակցությամբ սահմանում են աշակերտները: Ուսուցիչը որպես մասնակից նույնպես իրավունք ունի կանոն առաջարկելու այն պայմանով, որ իր առաջարկը ևս քննարկվի դասարանի կողմից: Դասարանի առաջարկած կանոնները պիտի հասկանալի լինեն բոլորին, առավել ևս՝ ընդունելի: Դրա համար հարկավոր է կետ առ կետ քննարկել յուրաքանչյուր կանոն, վերլուծել այն և

որոշել՝ ընդունում է դասարանն այդ կանոնը, թե՞ ոչ: **Հիշենք՝ դասարանն ինքը պիտի մշակի կանոնները, որ ինքն էլ պահպանի դրանք:** Անկախ կանոնների ձևակերպման ոճից և բառապաշարից, դրանք պիտի պայմաններ ստեղծեն ստեղծագործական-որոնողական գործունեության, ազատ արտահայտման, միմյանց հարգելու, ոչ ստանդարտ մտածողության դրսևորման, բոլորի ակտիվության ապահովման և միմյանց լսելու համար: Կարևորվում է նաև աշխատանքային մի էական կարգախոս՝ **«Քննադատել հայացքները, տեսակետները, մոտեցումները և ոչ թե դրանք ներկայացնող մարդկանց»:**

2. Որոշել խմբային աշխատանքի նպատակները:

3. Նախապատրաստել պարապմունքը (նախապատրաստել աշխատատեղերը, ուսումնական նյութերը, ձևավորել ուսումնական խմբեր, խմբերի ներսում հստակեցնել յուրաքանչյուրի պարտականությունը և այլն):

4. Ընտրել ուսումնական նյութը, հստակեցնել ուսումնական գործընթացի առանձնահատկությունները, և ակնկալվող արդյունքները:

5. Հետևել խմբային աշխատանքի ճիշտ ընթացքին և նպաստել սովորողների փոխադարձ հաղորդակցության կայացմանը. միջամտել միայն անհրաժեշտության դեպքում:

6. Խմբի բոլոր մասնակիցների ուժերով գնահատել աշակերտների աշխատանքը:

Դիտարկենք իրականացվող աշխատանքի քայլաշարը:

1. Խմբային աշխատանքի նպատակի որոշում

Նախ ուսուցիչը պիտի որոշի հետևյալ կանոններով.

ա. խմբերի առջև դրվող **ուսումնական նպատակները** պետք է բխեն տվյալ առարկայի ծրագրային պահանջներից, ձևակերպվեն մատչելի լեզվով, սակայն չխաթարեն հանձնարարության իմաստն ու հայեցակարգային մոտեցումները.

բ. **դաստիարակող նպատակները**, պարզել, թե անձնային ի՞նչ որակներ պիտի ձևավորել աշակերտների մեջ՝ տվյալ առաջադրանքի միջոցով.

գ. **գարգացնող նպատակները**, գարգացնել մտածողությունը, տրամաբանությունը, ինքնուրույնությունը, դիտողունակությունը, հիշողությունը և այլն.

դ. **կիրառական նպատակները**, մատչելի կերպով երեխաներին ներկայացնել, թե տվյալ գիտելիքը, ունակությունը կամ կարողությունը որտե՞ղ և ինչպե՞ս կարելի է կիրառել, այլ կերպ ասած՝ երեխայի ինչի՞ն են պետք տվյալ դասի ժամանակ ձեռք բերված գիտելիքները:

Այս նպատակներին հասնելու համար անհրաժեշտ է որոշել, թե ինչպիսի՜ ունակություններ և հմտություններ են անհրաժեշտ խմբային աշխատանքն իրականացնելու համար: Յավոք, մեր դասալսումների ժամանակ նկատել ենք, որ ավելի շատ կարևորվում են ուսուցողական նպատակները՝ անտեսելով համագործակցելու, հաղորդակցվելու, միասին որոշումներ կայացնելու կարողությունների գարգացումը:

2. Պարապմունքի նախապատրաստում

- Խմբում աշակերտների քանակը որոշվում է ըստ լուծվող խնդիրների քանակի: Որքան քիչ ժամանակ է տրվում տվյալ խնդրի լուծմանը, բնականաբար, այնքան քիչ թվով աշակերտներից պիտի կազմված լինեն առանձին խմբերը:

- Մեկ խմբի մեջ մտնող աշակերտների քանակով են պայմանավորվում (մինչև 4-5 աշակերտ) խնդրի քննարկման ակտիվությունը, տարակարծության գերիշխումը, փոխզիջումը:

- Խմբերի քանակը որոշվում է նախատեսված առաջադրանքների քանակի, քննարկվող նյութի բովանդակության առանձնահատկությունների, առկա կամ անհրաժեշտ դիդակտիկ նյութերի և ուսումնական այլ միջոցների հաշվառմամբ:

Դասարանը կարելի է խմբերի բաժանել տարբեր եղանակներով: Ամենատարածված և ամենաարդյանավետ տարբերակը պատահական ընտրությունն է: Տարրական դպրոցում շահեկան է, որ խմբերը ձևավորվեն կողք-կողքի նստած աշակերտներով: Եթե հարկավոր է 30 հոգիանոց դասարանը բաժանել 6 խմբի, ապա կարելի է հաշվել 1-ից մինչև 5-ը, ապա հանձնարարել՝ «Բոլոր 1 արտասանած երեխաները հավաքվեն իրար մոտ, 2-ները՝ մեկտեղ և այդպես շարունակ»: Բոլոր դեպքերում հարկավոր է ուշադիր լինել, որ նույն խմբում չհավաքվեն միևնույն «որակներ» ունեցող աշակերտները (միայն ակտիվները, միայն պասիվները, լիդերները, միայն կատարողները, կոնֆլիկտայինները, հարմարվողները, ակադեմիապես ուժեղները կամ թույլերը և այլն):

Խմբերի բաժանման եղանակ է նաև ըստ հետաքրքրությունների, նախասիրությունների, հայացքների և ցանկությունների կազմավորումը:

Սակայն այսպիսի բաժանման դեպքում հնարավոր է, որ ստեղծվեն միատարր խմբեր (միայն գերազանցիկներ, միայն աղջիկներ, միայն տղաներ և այլն): Պետք է նկատի ունենալ, որ խմբում ընդգրկված տարբեր ընդունակություններով երեխաների ներկայությամբ խնդրի քննարկումն ընթանում է ավելի ակտիվ, անկաշկանդ տեսանկյուններով, և անգամ ուսման նկատմամբ հետաքրքրություն չունեցող երեխան դրսևորում է բարձր ակտիվություն:

Դասարանի բոլոր աշակերտների համագործակցելու կարողության ձևավորման նպատակով շահեկան է խմբերի կազմը հաճախակի փոխել: Սակայն խորհուրդ չի տրվում խմբի կազմը փոխել միևնույն հանձնարարությունը կատարելիս, եթե անգամ այդ խմբում աշխատանքը տվյալ կազմով չի ստացվում: Նման դեպքում ուսուցիչը կարող է դառնալ այդ խմբի անդամը և ուղղորդել խմբի աշխատանքը:

3. Դասարանի նախապատրաստումը

Նստարանները դասարանում պետք է այնպես դասավորել, որ աշխատելիս երեխաները կարողանան նստել դեմ-դիմաց (փունջ ստեղծեն), ազատ հաղորդակցվել, օգտվել ուսումնական նյութերից, դրանք փոխանցել միմյանց, քննարկումներ ծավալել՝ առանց խանգարելու միմյանց: Այս դեպքում ուսուցիչը կարող է ազատ շրջել, մոտենալ յուրաքանչյուր խմբի, ունկնդրել նրանց քննարկման ընթացքը, երբեմն դառնալ մասնակից և այլն: Անհրաժեշտ նյութերը պիտի բավարարեն բոլոր խմբերին:

4. Ուսումնական նյութի ներկայացումը

Հանձնարարությունները կարող են ուղեկցվել մանրամասն բացատրություններով, մեկնաբանություններով կամ առանց դրանց (նայած, թե ինչ նպատակ է հետապնդվում): Թեմայի ընտրությունը, բնականաբար, պայմանավորված է աշխատանքի բարդությամբ, աշակերտների՝ ուսումնական նյութին տիրապետելու և այդ բնույթի աշխատանք կատարելու ունակությունների մակարդակով, խմբում ընդգրկված աշակերտների

միջանձնային հարաբերությունների բնույթով, հանձնարարության տեսակով (հետաքրքրաշարժ է, հանելուկային, տրամաբանական և այլն):

5. Խմբային աշխատանքի կազմակերպումը

Խմբի ներսում աշակերտների միջև դերերը (պարտականությունները) պիտի բաժանվեն այնպես, որ նրանք զգան համագործակցության անհրաժեշտություն: Աշխատանքային հմտությունների հավասար ձեռքբերման դիտանկյունից կարևոր է դերերի հաճախակի փոփոխությունը: Խմբի բոլոր անդամների հավասար պատասխանատվության և միևնույն ակտիվության ապահովման առումով շահեկան է, որ միայն աշխատանքի ավարտից հետո խմբի ներսում որոշվի, թե ո՞վ է ներկայացնելու խմբի կարծիքը, ո՞վ է խոսելու, ինչպե՞ս են նյութերը հավաքելու և այլն. խմբում ակտիվությունն ի սկզբանե կնվազի, եթե նախապես հայտնի լինի, թե ո՞վ է պատասխանատու հարցի ներկայացման համար:

Երբ խմբերը ձևավորված են, հանգամանորեն պիտի բացատրվի առաջադրանքի բովանդակությունն ու նպատակները, ապա՝ կատարման տեխնիկան և սպասվող արդյունքը: Կարելի է հարցերի միջոցով պարզել՝ արդյոք աշակերտները հասկացել են առաջադրանքի կատարման ընթացքը: Ուսումնական համագործակցության առավելություններից մեկն էլ այն է, որ աշակերտներն իրենք են միմյանց բացատրում չհասկացածը. աշակերտն իր հասակակցին նյութը բացատրում է աշակերտական ի՞ր ըմբռնմամբ, ի՞ր բառապաշարով և մեթոդներով: Այդ դեպքում նրանք միմյանց ավելի լավ են հասկանում:

6. Խմբային աշխատանքի վերահսկողության մեխանիզմները

Աշխատանքի ընթացքում ուսուցիչը շրջում է, դիտում, թե ինչպես են աշխատում երեխաները, ինչպես են վիճում, հակադրվում միմյանց, համաձայնության գալիս, ներկայացնում իրենց դատողությունները, վիճարկում միմյանց կարծիքները: Դրանով նա ոչ միայն որոշում է, թե ինչպես են աշակերտները նյութը յուրացրել, այլև գնահատում է նրանց միջանձնային հարաբերությունները և փոքր խմբերով աշխատելու կարողությունները, հնարավորություն է ունենում հետևելու երեխաների մտքի ընթացքին, պարզելու, թե որքանով են նրանք յուրացրել նյութը: Այս գործընթացում ուսուցիչը պիտի նպատակաուղղի աշակերտների աշխատանքի ընթացքը, օգնի նրանց (եթե դրա կարիքն աշակերտներն զգում են), զրուցի խմբերի հետ, հետաքրքրվի, թե նրանք ի՞նչ են անում, ինչո՞ւ են այդպես անում, ճի՞շտ է այդպես անելը և այլն: Կարևորն այս փուլում ուսուցչի մասնակցության աստիճանի հստակեցումն է. նա պիտի նպաստի, որ գործընթացին ակտիվորեն մասնակցեն բոլորը, խրախուսի աշխատանքի բարեհաջող ընթացքը, առաջադրանքները կատարելիս հաջողված մոտեցումների ընտրությունը, առողջ միջանձնային հարաբերությունների կառուցումը՝ զերծ մնալով չափից ավելի միջամտությունից: Ճիշտ ուղղորդելու դեպքում (կարճ ժամանակ անց) աշակերտներն իրենք կգտնեն համագործակցված, համերաշխ և արդյունավետ աշխատելու ուղիները և առաջադրված խնդրի պատասխանը: **Ուսուցչի՝ խմբային աշխատանքը վարելու հմտությունն առաջին հերթին բնորոշվում է օգնության պահի, ձևի ու չափի ճիշտ որոշմամբ:**

7. Խմբային աշխատանքի արդյունքների գնահատում

Խմբային աշխատանքն ավարտելուց հետո, բնականաբար, աշակերտները պետք է ներկայացնեն արդյունքները, ձևակերպեն այն հարցերը, որոնք ծագել են աշխատանքի ընթացքում, դրանք ներկայացնեն դասարանին, ընդհանրացնեն ձեռք բերած գիտելիքները: Այս գործընթացում աշակերտներն իրենք կարող են գնահատել միմյանց գիտելիքները և օգնել դասընկերներին՝ ուղղելու թույլ տրված սխալները:

Խմբային աշխատանքը գնահատելիս կարևոր է ոչ միայն առաջադրանքի կատարման արդյունքը, այլև այդ արդյունքին հասնելու ձևերն ու միջոցները: Մասնավորապես էական են. խմբի բոլոր անդամների մասնակցությունը, համագործակցության առկայությունը, խնդրի լուծման ուղիների ընտրության եղանակները, արդյունքների ներկայացման ձևն ու բովանդակությունը, խմբի կարգապահությունը (ընդունած կանոնների համաձայն):

Շահեկան է աշխատանքի ավարտից հետո աշակերտներին առաջարկել քննարկել իրենց աշխատանքի ընթացքը՝ իրականացնելով վերլուծություններ, դատողություններ, գնահատումներ, ընդհանրացումներ՝ կիրառելով հետևյալ հարցադրումները.

- որոշում կայացնելիս ձեզանից յուրաքանչյուրն ինչպե՞ս էր օգնում մյուսներին,
- ինչպե՞ս որոշեցիք, թե ով պիտի ներկայացնի խնդրի լուծումը,
- ինչպե՞ս կատարեցիք աշխատանքի բաժանում (ինչի՞ց ելնելով),
- ինչո՞ւ հանգեցիք այդ եզրակացությանը և այլն,
- ի՞նչ դժվարությունների հանդիպեցիք,
- որո՞նք են ձեր ուժեղ և թույլ կողմերը:

Խմբային աշխատանքը ստեղծագործական որոշումների հանգեցնելու նպատակով, անհրաժեշտ է.

ա) աշխատանքային հարաբերությունները կառուցել այնպիսի մեթոդական և հոգեբանական հիմքերի վրա, որ կրտսեր դպրոցականները չմտահոգվեն, թե իրենց դատողություններն ու պատասխանները կարող են սխալ լինել:

բ) աշակերտներին ընձեռել նոր իրադրությանն ընտելանալու հնարավորություն: Օրինակ, կարելի է գործողության մեջ դնել «սադրիչ» առաջադրանքներ, որոնք սովորաբար կապված չեն ապաստվող գործունեության բարելավման հետ:

գ) Զարգացնել շրջապատն ընկալելու աշակերտների ունակությունը, բարձրացնել նրանց զգայունությունը, նրբանկատությունը:

դ) Ընդլայնել գիտելիքների պաշարը:

ե) Ստեղծել նպաստավոր պայմաններ, որպեսզի աշակերտներն ստեղծագործական գործընթացում ունենան անհատական ներդրում:

զ) Աշակերտներին դիտել իբրև փոքրիկ հետազոտողների:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Գյուլամիրյան Ջ. Հ., Մայրենիի ուսուցման մեթոդիկա, Երևան, Զանգակ, 2018:
2. Էդիլյան Գ. Է., Հարցողական դասավանդում, Հայ մանկավարժներ, 19-րդ դար, 2-րդ գիրք, Եր., 1961, էջ 638:
3. Հանրակրթության պետական կրթակարգ, ՀՀ ԿԳՆ, Երևան, Անտարես, 2011:
4. Кларин М.В. Инновации в мировой педагогике: обучение на основе исследования, игры и дискуссии. М., 1995, с. 177.

РЕЗЮМЕ

ОРГАНИЗАЦИЯ ТВОРЧЕСКО-ИССЛЕДОВАТЕЛЬСКОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ МЛАДШИХ ШКОЛЬНИКОВ В ГРУППОВОЙ РАБОТЕ

ГЮЛАМИРЯН ДЖ. А.

В статье обсуждаются принципы организации группового обучения одной из форм работы, обеспечивающих школьно-ориентированную учебную деятельность в начальной школе. Автор представил преимущества групповой работы, сильные и слабые стороны, обосновал их эффективностью процесса.

Представлены методическая цепочка организации групповой работы в начальной школе и способы ее осуществления.

Ключевые слова: сотрудничество, взаимопонимание, творческо-поисковая деятельность, участвующая и направляющая, контрольно-оценочная функция.

SUMMARY

SUPPORTING CREATIVE-RESEARCH ACTIVITIES OF JUNIOR SCHOOLCHILDREN THROUGH GROUP WORK

GYULAMIRYAN J. H.

This article discusses the principles of organizing one of the forms of group teaching that provide student-centered learning activities in elementary school. The author presented the advantages of teamwork, its strengths and weaknesses, also proved its effectiveness in classroom.

The methodological chain of organizing group work in elementary school as well as the forms and ways of its implementation are presented.

Keywords: cooperation, mutual understanding, creative and research activity, participation and guidance, controlling and evaluation function.

Երաշխավորել է տպագրության Բ.Գ.Թ., դրցենտ Ա. Գալստյանը 15.10.2020թ.